



## ԳԵՐՆՃԵՈՐՀ Տ. ԳԵՐՆԵՒԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓՈԼԱՏՅԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ ՄԵՐ ՀԱՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ՝<sup>1</sup>

**ՀԱՐՑՈՒՄ.**— Ի՞նչ տպավորություն թողած է Ձերոք Սրբազնության վրա Ամենայն Հայոց Ազգապետ և Կրօնապետ Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսը:

**ՊԱՏԱՍԽԱՆ.**— Ամենայն Հայոց Հայրապետը՝ Նորին Ս. Օծուկյան Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոս մեր դարու հայ եկեղեցականության մեծագույն ղեմքերեն մին է: Հակառակ իր հառաջացած տարիքին, Նորին Սրբությունը անխոնջ կաշխատի, սրտեռանդն նվիրված Ս. Էջմիածնի ու Հայաստանյայց եկեղեցվո պաշտօնության և հայ ժողովուրդի ու Հայրենիքի բարօրության: Ան ամենայն աշխուժությամբ կհոգևի իր հոտը թե՛ արտասահմանի, թե՛ Սոփեոսական Միության մեջ և թե՛ Հայաստանի սահմաններեն ներս: Ազգային և եկեղեցական բոլոր խնդիրներուն և գործերուն լավագույն լուծումը կգտնե ան ըստ պատշաճության իրաց և հանգամանաց, իրողություն մը, որ առանձնահատուկ է իր լայնախոսության, ներթափանցողության և խորունկ կշռադատության: Իր մտածումն ու աշխատանքը կեդրոնացած են հանուր հայության ազգային և եկեղեցական միության վրա: Հայաստանյայց եկեղեցին իր բոլոր նվիրապետական Աթոռներով և հայ ժողովուրդը ցիրուցանված աշխարհի շրջա կողմերը, կկազմեն ռեզոլեն անքակտելի միություն մը, զոր պետք է ավելի զորացնել, ամրապնդել՝ ամբողջ հայության հավերժու-

թյան համար: Հայոց Սրբազնագույն Հայրապետը գերագույն հարացույցն է դժվարությանց հաղթահարելու, նեղությանց դիմակալելու, դեկավարելու և առաջնորդելու, հոտը հովվելու, նվիրումի ու ծառայության, մեծության և խոնարհության. ան մարմնացումն է մեր պաշտելի նախնիքներու շունչին ու սգիին:

**ՀԱՐՑՈՒՄ.**— Ի՞նչ է Ձեր կրած տպավորությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն:

**ՊԱՏԱՍԽԱՆ.**— Կալ: Հոգևին կցանկալինք սակայն տեսնել լավագույնը և առ այդ անհրաժեշտ է, որ Վեհապատ Հայրապետը իր շուրջն ունենա ավելի մեծ հույլ մը եկեղեցականների դիտում և հավատավոր, իսանդուն և գործունյա, հոգվով նվիրված Մայր Աթոռի ծառայության և պաշտօնության: Այսպիսի փաղանգ մը հայ եկեղեցականներու պիտի կարենա շին, պայծառ ու անսասան պահել Ս. Էջմիածինը և Ամենայն Հայոց Հայրապետությունը:

**ՀԱՐՑՈՒՄ.**— Ըլլալով Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Անթիլիասի Դպրեվանքի վերատեսուչ, ի՞նչ տպավորություն կրեցիք Էջմիածնի Հոգևոր Ճեմարանեն:

**ՊԱՏԱՍԽԱՆ.**— Հոգևոր Ճեմարանը սյունն է Մայր Աթոռին. պետք է անհրաժեշտորեն զորացնել տեսչական և ուսուցչական կազմերը և բազմացնել ուսանողության թիվը: Այս գործին մեջ պետք է, որ արտասահմանի հայությունը իր նյութական և բարոյական միջոցներով զորավիգ կանգնի անոր: Մրաված աշխատանքով, մասնավոր ղեկավարությամբ և բոլոր հսկողությամբ ներկա 3 է ուսանողներեն կարելի է Ազգին ու եկեղեցվուն ծառայության նվիրված լավ եկեղեցականներ ունենալ: Ճեմարանը տկար է կրոնական և աստվածաբանական գիտությանց մեջ, իսկ զորավոր՝ հայագիտական ուսմանց մեջ:

1. Ամսից ավելի Մայր Հայրենիքում էր գտնվում Մեծի տանն Կիլիկիո Կաթողիկոսության Անթիլիասի Դպրեվանքի վերատեսուչ գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլաթյանը: Իր մեկնելու նախօրյակին մեր խմբագրության թղթակիցը գրմեց սրբազանին՝ իր ստացած տպավորությունները մեր ընթերցողների հետ բաժանելու խնդրանքով և իր հարցումներին ստացավ գրավոր պատասխաններ, որոնք հրատարակության ենք հանձնում:— ԽՄԲ.:

**ՀԱՐՑՈՒՄ.**— Ինչպե՞ս եք տպավորված Մայր Հայրենիքի եկեղեցիներին, եկեղեցականներին և այն պատարագներին, զորս մատուցանեցիք Դուք անձամբ:

**ՊԱՏԱՍԽԱՆ.**— Մայր Հայրենիքին մեջ քեզ թվով գործող եկեղեցիներ և վանքեր տեսա: Դիտելի է, որ հոս հայ եկեղեցականները նվիրված են իրենց պաշտոնին և լավագույնս կկատարեն ծեսերն ու արարողությունները և խորհրդագործությունները: Իմ այցելած եկեղեցիներես տպավորությունս այն եղավ, որ հայ ժողովուրդը շերմեռանդորեն և սրտագինս նվիրված է իր Ս. Եկեղեցվուն և իր նախնիքներու հավատքին և թե ան ավելի մեծ թվով պատրաստված եկեղեցականներու պետք ունի՝ հոգևոր առաջնորդության համար:

**ՀԱՐՑՈՒՄ.**— Ձերդ Սրբազնությունը, վերջին տարիներս այցելած ըլլալով միջին արիվելյան, ամբրիկյան և եվրոպական կարգ մը երկիրներ, կբարեհաճի՞ լուսաբանել, թե ի՞նչ է Սփյուռքի հայութեան վերաբերմունքը դեպի Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը և ի՞նչ կարելի է ընել՝ առավել ևս սերտացնելու համար Մայր Աթոռի և Սփյուռքի կապը:

**ՊԱՏԱՍԽԱՆ.**— Սփյուռքի հայությունը խոր հավատքով և ջերմ պաշտանքով կապված է Մայր Աթոռին՝ Ամենայն Հայոց Հայրապետության, քանզի համոզված է, որ Ս. Էջմիածինը հայութեան և Հայաստանյայց Ս. Եկեղեցվո գոյատևման և պահպանման կորիզն ու պատվանդանն է: Սփյուռքը կապրի այն ջերմ հավատքով, թե իր կրոնական և ազգային դիմագիծը՝ ինքնուրույնությունը կպահէ և կհավերժացնէ ինքպինքը երբ ճշմարտապես հոգևով կապվի Մայր Աթոռի հետ: Ան կհավատար, թե մի է Հայաստանյայց Եկեղեցին և ինք այդ միություն անբաժանելի մի մասն է:

Սփյուռքի և Մայր Աթոռի միջև հարաբերությունները ավելի կսերտանան, երբ ևրկուստեք փոխադարձ այցելություններ ըլլան և զիրար ավելի մոտեն ճանչնան և ճշմարտորեն հասկնան:

**ՀԱՐՑՈՒՄ.**— 1945-ին ալ այցելած էիք Սովետական Հայաստան: Այդ այցելութենին ութ տարի հետո ի՞նչ տարբերություն կտեսնեք Մայր Հայրենիքի և անոր մայրաքաղաք Երևանի նախկին և այժմյան վիճակի մեջ:

**ՊԱՏԱՍԽԱՆ.**— Տարբերությունը շատ մեծ է: Մայր Հայրենիքը իր մայրաքաղաքով շինարարական, տնտեսական, կրթական և գիտական ասպարեզներու մեջ աչքատու նվաճումներ տնեցած է. նվաճումներ, որոնք քանի մը տարի առաջ մեր միտքին իսկ չէին անցներ: Կառուցված են նոր գրուղեր, շեն-

քեր, գործարաններ, դպրոցներ, շուկաներ: Կառուցողական և արդյունաբերական աշխատանքը մեծ թափով հառաջ կերթա: Ժողովուրդի տնտեսական կյանքը զգալիորեն բարելավված է և ավելի բարելավվելու բոլոր հնարավորությունները կան:

**ՀԱՐՑՈՒՄ.**— Իմացած եմ, որ վերջին օրերս այցելած եք կարգ մը հնագիտական վայրեր. ինչպե՞ս եք տպավորված այդ այցելություններին:

**ՊԱՏԱՍԽԱՆ.**— Հնագիտական վայրերը թե՛ ուրախությամբ և թե՛ տխրությամբ համակեցին զիս: Տխրությամբ՝ որովհետև Կամակերացուցած ետուն և հավատքով լի կյանքը շունչին. գրեթե բոլորն ալ առանց միաբանություն կան: Ուրախությամբ՝ որովհետև անոնք ամենքն ալ Հայաստանի ճարտարապետական հնութեանց պահպանության կոմիտեի կողմից ամենայն աշխրջությամբ հակողության տակ առնված են և փերամորոգման վիճակի մեջ են:

**ՀԱՐՑՈՒՄ.**— Ինչպե՞ս գտաք հայրենադարձներու փրձակը:

**ՊԱՏԱՍԽԱՆ.**— Իմ ճանչցած ընտանիքներս, բարեկամներս և ազգականներս, որոնց հանդիպեցա և որոնց տուները այցելեցի, գոտ բարովք վիճակի մեջ: Անոնք ունին իրենց տուները, փոքր կամ մեծ, սրտադին կաշխատին: Աշխատողին համար հոս միշտ գործ կա: Մեր Երեզավոթող հայրենակիցները գործունյա են, աշխատասեր և հնարամիտ, որով կապրին գոհացուցիչ պայմաններու մեջ:

**ՀԱՐՑՈՒՄ.**— Մայր Հայրենիքի մեջ Կ՛հնչի փաստ կամ երևույթ հատկապես տպավորած է Ձեզ:

**ՊԱՏԱՍԽԱՆ.**— Շինարարական և գիտական նվաճումները: Ո՛չ միայն տպավորված եմ անտնցմով, այլ զարմացած՝ թե շորս տարիներ պատերազմի անդհանրով լեցված փոքր ժողովուրդ մը, կարճ ժամանակամիջոցի մը ընթացքին, ի՞նչպես կարողացած է այդպիսի շինարարական և գիտական նվաճումներ կատարել:

**ՀԱՐՑՈՒՄ.**— Ձերդ Սրբազնությունը ունի՞ որևէ պատգամ, Մայր Հայրենիքին դեպի Անթիլիաս վերադարձի իր ճամբաստանի վրա:

**ՊԱՏԱՍԽԱՆ.**— Թելադրությունս այն պիտի ըլլար, որ Մայր Հայրենիքի մեջ շինարարական, տնտեսական, կրթական, արդյունաբերական և գիտական հառաջդիմության հետ կրոնական հոգևոր կյանքն ալ ավելի զարգանար և ուժանար: Հայաստանյայց Ս. Եկեղեցին հայ ժողովուրդի էություն մի մասն է և այդպես ալ պետք է շարունակել:

Ք.Պ.Ա.Կ.Ի.Ց